

Հ Ա Շ Կ Ե Տ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

21.07.2014 թ

գ. Արզինա

«Արմավիրի մարզի Արզինա համայնքի ղեկավարի 2014 թվականի առաջին կիսամյակի աշխատանքային գործունեության վերաբերյալ:

Արզինա համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հաշվետու ժողով: Ժողովին մասնակցում էին ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ Աբրահամ Մարտիրոսյանը, ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ, գյուղապետարանի աշխատակիցներ:

Նախագահությամբ համայնքի ղեկավար Մ. Գրիգորյանի, Քարտուղարությամբ աշխատակազմի քարտուղար Ս. Հարությունյանի Ձեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավար Մ. Գրիգորյանը:

Հարգելի հյուրեր, Արզինա համայնքի բնակիչներ.

Թույլ տվեք ձեր ուշադրությունը հրավիրել իմ՝ համայնքի ղեկավարի, գյուղապետարանի աշխատակազմի կողմից 2014 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների մասին՝ ըստ համապատասխան բնագավառների:

2014 թվականի առաջին կիսամյակում անցկացվել են ավագանու չորս նիստեր , որոնց ընթացքում քննարկվել են համայնքին հուզող տարաբնույթ հարցեր, կայացվել որոշումներ , հետամուտ եղել դրանց կայացմանը: 2014 թվականի առաջին կիսամյակում բյուջեի կատարողականը կազմում է հետևյալը. Հողի հարկ հավաքագրվել է 3359.7 հազար դրամ կամ 44.62 % ,գույքահարկ՝ 245.5 հազար դրամ կամ 40.92 % ,վարձակալած հողի վարձավճար՝ 499.2 հազար դրամ կամ 48.23% Տեղական տուրքեր՝ 36.0 հազար դրամ կամ 100%: Գյուղապետարանի կողմից անցկացվել են անասունների հունվարյան հաշվառումը, ցանքերի մասին հունիսյան հաշվետվությունը, Արմավիրի մարզպետարան ինչպես նաև տարբեր կազմակերպությունների են ուղարկվել շուրջ ութսուն գրություններ, անցկացվել է աշնանային գորակոչի աշխատանքներ, անհատ անձանց են տրվել իննսուներից ավել տարբեր բնույթի տեղեկանքներ: Երկարատև պարապուրդից հետո առաջին անգամ շահագործվել է մանկապարտեզը: Այսօր արդեն մանկապարտեզ են հաճախում համայնքի քսանհինգ երեխաներ: Ընթացքի մեջ են մանկապարտեզի շենքի մասնակի նորոգման աշխատանքները:

Համայնքի հինախնդիրներն են՝

Համայնքը չունի մշակույթի տուն, գյուղապետարանի շենք, գազաֆիկացված չե, անբարեկարգ են մնում համայնքի ներսի փողոցների վիճակը, մեծ թիվ են կազմում արտագնա աշխատանքի մեկնողները:

Արզինա համայնքի ղեկավար
 Մ. Գրիգորյան